ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 182 – Ա **02 ապրիլի 2021 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 245-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 419-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ԿԱՍԵՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Վերսկսել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2020 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթներ հայտարարելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2020 թվականի ապրիլի 16-ի N 157-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 245-Ա որոշմամբ հայտարարված և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2020 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթը կասեցնելու մասին» N 419-Ա որոշմամբ կասեցված բաց մրցույթը:

2. «Վարդենիսի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացվող բաց մրցույթը տեղի կունենա 2021 թվականի ապրիլի 20-ին՝ ժամը 11-ին:

02.04.2021

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Ք.Գավառ